[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
3	Նոյեմբեր	2018 թ.		Բ	4776607100
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
3	Նոյեմբեր	2018 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 2 6 3 6 7 8 1
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[10] Անվանումը	«ԱՎ ԷՔՍՊԵՐՏ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՄՊԸ)
[11] Բանկային տվյալները	Արդշինբանկ N 2470103343210000
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ ԹԻՎ 48
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	N 900011000834
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[19] Լրացուցիչ տվյալներ	
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն: Լիազորագիր — Համար: Ամսաթիվ:

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N/Հ NN	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ծանրաքաշությունը	Միավորի գինը	Չեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	թիվ 11167617 քր գործով դատահաշվապահական փորձաքննություն	հատ	1	750000		750000
Ընդամենը						750000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ GRIGORYAN NAREK 1514930757

(անուն, ազգանուն)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(անուն, ազգանուն)

03/11/2018 09:31:40

750

ՈՐՈՇՈՒՄ

Դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու մասին

02-ը օգոստոսի 2017թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ս.Հ.Բեսալյանս, քննարկելով վարույթիս թիվ 11167617 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

17.04.2017թ. Սվետլաննա Սարատիկյանը և 18.04.2017թ. Արմենուհի Ավետիսյանը՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնում հաղորդումներ են տվել, որ աշխատելով Բագրատունյաց պողոտա 1 հասցեում գործող <<Երևան>> բժշկական կենտրոնում՝ չեն ստացել իրենց հասանելիք աշխատավարձի և արցակուրդային գումարները, որը յուրացրել է նշված բժշկական կենտրոնի նախկին գլխավոր հաշվապահ Վարդուհի Սերգեյի Սոֆյանը:

Նույն օրը ստացվել է <<Երևան>> բժշկական կենտրոնի 31 աշխատակիցների միասնական դիմումը՝ ընկերության ղեկավարության կողմից իրենց արձակուրդային գումարները և աշխատավարձները չվճարելու և յուրացնելու վերաբերյալ:

Բացի այդ՝ 18.04.2017թ. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժին է ստացվել <<Երևան>> ԲԿ-ի համասեփականատեր Հայկ Զորիի Բալայանի դիմումն այն մասին, որ նույն ԲԿ-ի մյուս համասեփականատեր՝ Տարոն Արտաշեսի Տոնոյանի գիտությամբ՝ ԲԿ-ի տնտեսական գծով փոխտնօրեն Արմեն Էդուարդի Մելքոնյանը, լաբորատորիայի նախկին վարիչ Հասմիկ Արտուշի Մինասյանը և նախկին գլխավոր հաշվապահ Վարդուհի Սերգեյի Սոֆյանը թույլ են տվել խախտումներ և չարաշահումներ՝ վնաս պատճառելով պետության, ընկերության և իր՝ Հայկ Բալայանի շահերին:

Փաստի առթիվ ՀՀ ոստիկանության ԵՔՎ Շենգավիթի բաժնում 22.04.2017թ. ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 214-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 11167617 քրեական գործը, որը նախաքննություն կատարելու համար 26.04.2017թ. ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժին:

Տուժող է ճանաչվել և հարցաքննվել Հայկ Զորիի Բալայանը /Երևան ԲԿ-ի համասեփականատեր/, ով ցուցմունքով հայտնել է, որ 2006թ., սեփականաշնորհել են Երևան քաղաքի Բագրատունյաց պողոտա 1 հասցեում գտնվող Երևան բժշկական կենտրոնը և հիմնադրվել է <<ԼԵԲԵՆ>> ՍՊ ընկերությունը, որի բաժնեմասի 50%-ի սեփականատերը հանդիսացել է ինքը, իսկ մյուս 50%-ի սեփականատեր՝ Տարոն Տոնոյանը: Վերջինս ընկերության բաժնեմասի 50%-ի սեփականատեր ձևակերպվել է առանց որևէ ներդրման և ծախսի: Իր և Տարոն Տոնոյանի միջև բանավոր պայմանավորվածություն է ձեռք բերվել այն մասին, որ

առաջին 5 տարին ընկերության տնօրեն կիանդիսանա Տարոն Տոնոյանը, իսկ հաջորդ 5 տարին՝ ինքը և այդպես 5 տարին մեկ կփոխարին միմյանց: Բժշկական կենտրոնի սեփականաշնորհման ամբողջ գումարը վճարվել է իր ընտանիքին մոտ կանգնած անձանց կողմից՝ 300.000.000 դրամի չափով, որոնց հետագայում ընկերությունը իր շրջանառությունից, ինչպես նաև գույքը վաճառելու միջոցով վերադարձրել է նշված գումարը: Տարոն Տոնոյանն ընկերության տնօրեն նշանակվելուց հետո սկսել է մտերիմներով ու հարազատներով համալրել բժշկական կենտրոնի պատասխանատու պաշտոնները և ինքը որևէ կապված չունենալով նրա հետագա մտադրությունների մասին, հավատացել ու վստահել է նրան և ստացել է որպես բաժնետիրոջ իր շահաբաժիններն այն գումարների չափով ինչ որ ներկայացրել է Տարոն Տոնոյանը, չկասկածելով, որ նա ընկերության գործունեության ընթացքում իր նշանակած անձանց միջոցով կատարել է խոշոր հափշտակություններ ու չարաշահումներ և դրանք հաշվապահորեն ներկայացրել որպես բժշկական կենտրոնում կատարված ծախսեր, որոնք հանելուց հետո միայն հաշվարկվել է իր շահաբաժինը: Տարոն Տոնոյանը ընկերության տնտեսական գծով փոխտնօրեն է նշանակել իր մորեղբայր Արմեն Մելքոնյանին, վերջինիս մտերիմ Վարդուհի Սոֆյանին՝ գլխավոր հաշվապահ, ախտորոշիչ լաբորատորիայի վարիչ իր մտերիմ անձին՝ Հասմիկին և այլն, որոնց միջոցով էլ կատարել է հափշտակությունները: 2012-2014 թվականների ընթացքում իր և Բալայան ընտանիքին հարգող բարերարների կողմից, հիվանդանոցի գործունեությանն աջակցելու, բնականոն գործունեություն ապահովելու նպատակով բժշկական կենտրոնում տեղադրվել է մոտ 300.000 ԱՄՆ դոլար արժողությամբ ջեռուցման համակարգ: Բացի այդ իրեն նվիրել են, իսկ ինքը ժամանակավոր օգտագործման համար ընկերությանը հանձնել է վերակենդանացման և վիրահատական բաժանմունքի գույքեր՝ նորագույն սարքավորումներ, ապարատներ և գործիքներ մոտ 400.000 Եվրո արժողությամբ: Տարոն Տոնոյանն կողմնակիցների միջոցով այդ գումարները ձևակերպել է որպես ուռճացված ծախսեր և այդ ճանապարհով հափշտակել է գումարները, գույքային վնաս պատճառելով ինչպես ընկերությանը, այնպես էլ իրեն, քանի որ արդյունքում ինքը պակաս շահաբաժին է ստանցել: Վերը նշված փաստերը պարզել է 2014 թվականի սեպտեմբեր ամսից, երբ սկսել է հետաքրքրվել ընկերության գործունեությամբ, պարզել է, որ ընկերության կողմից գնված ապրանքները՝ շինանյութ, տնտեսական ապրանքներ և այլն, անհրաժեշտ ապրանքների ձեռք բերումը հաշվապահորեն ձևակերպված են տվյալ ժամանակահատվածում եղած շուկայական գներից անհամեմատ բարձր գներով: Հափշտակության մեխանիզմներից մեկն էլ այն է եղել, որ այդ ապրանքները ձեռք են բերել տարբեր մեծածախ շուկաներից, սակայն դրանց ձեռք բերման տակ դրվել է մի շարք հայտնի խանութների ՀԴՄ կտրոններ: Բացի այդ, ախտորոշման լաբորատորիայի վարիչի կողմից հիվանդների ախտորոշումների ընթացքում որոշակի տեսակի ախտորոշում չի կատարվել, սակայն փաստացի փաստաթղթային նշվել է, որ դրանք կատարվել են և երբ դա իր կողմից պարզվել է՝ իր ուղղակի պահանջով վերջինս ազատվել է աշխատանքից ու միայն Տարոն Տոնոյանի

խնդրանքով տեղափոխվել ավելի ցածր աշխատանքի: Այդ փաստերը հայտնաբերելուց հետո, պահանջել է, որպեսզի Տարոն Տոնոյանը ազատվի տնօրենի պաշտոնից և ինքը նշանակվի տնօրեն, սակայն վերջինս ոչ միայն հրաժարվել է ազատվել պաշտոնից այլ նաև առաջարկել և պնդել է որպեսզի այլևս միասին չաշխատեն և բաժանվեն միմիանցից: Ինքը առաջարկել է մինչև բաժանվելու գործընթացը խելամիտ կազմակերպելը նշանակել մեկ այլ չեզոք տնօրենի, որին երկուսն էլ կվստահեն: 2015թ. հունվար ամսին Տարոն Տոնոյանը պայմանավորվածության համաձայն ազատվել է տնօրենի պաշտոնից և տնօրեն է նշանակվել մինչ այդ որպես փոխտնօրեն աշխատող Հակոբ Բալայանը: Ինքը բազմիցս Տարոն Տոնոյանից պահանջել է ընկերությունում անկախ աուդիտորական կազմակերպության միջոցով աուդիտ անցկացնել, սակայն վերջինս կտրականապես հրաժարվել է և հետագայում էլ քանի որ Տ.Տոնոյանը փաստացի չէր թողնում որպեսզի Հ Բալայանը պատշաճ կատարի տնօրենի պարտականությունները, նա էր անմիջական հրահանգներ շարունակում տալ փոխտնօրեններին, գլխավոր հաշվապահին և մյուս աշխատակիցներին, բացի այդ չափազանց լարված էին իր և Տարոն Տոնոյանիի փոխհարաբերությունները, որոնց արդյունքում Հակոբ Բալայանը հրաժարվել է տնօրենի պաշտոնից:

2015թ. վերջին կան 2016թ. սկզբներին պետական եկամուտների կոմիտեի աշխատակիցները ստուգել են ընկերության որոշակի ժամանակահատվածի գործունեությունը, որի ընթացքում պարզվել է, որ Տարոն Տոնոյանը չի կարողացել հիմնավորել հաշվապահորեն ձևակերպված որոշակի ծախսեր և արդյունքում պետությունից թաքցրել էր մոտ 55 մլն. դրամի հարկ, որը տույժ տուգանքներով հանդերձ կազմել է մոտ 110 մլն դրամ: Դրա պատճառով 2016թ. հուլիս ամսից ընկերության հաշիվների վրա դրվել է կալանք, 2016 թվականի հոկտեմբեր ամսից հիվանդանոցը հոսանքազրկվել է և այլևս չի գործել:

2016թ. հոկտեմբերի 13-ի դրությամբ ընկերության դրամարկղում առկա է եղել 363.743.773 ՀՀ դրամ կանխիկ գումար, մինչդեռ, ինչպես նշված օրվա դրությամբ, այնպես էլ՝ ներկայումս հիշյալ գումարը ընկերության դրամարկղում առկա չէ և իր կարծիքով այն նույպես հափշտակվել է Տարոն Տոնոյանի կողմից: Բացի այդ, Տարոն Տոնոյանի մորեղբայր, <<Երևան>> բժշկական կենտրոնի տնտեսական գծով փոխտնօրեն Արմեն Մելքոնյանից պահանջել և ուսումնասիրվել է <<Երևան>> բժշկական կենտրոնում 2011-2014թթ. ժամանակահատվածում տեղադրված եվրոպատուհանների և դռների վերաբերյալ փաստաթղթերը, քանի որ դրանք էականորեն ցածրորակ ու էժանագին են եղել: Պարզվել է, որ բժշկական կենտրոնում նշված եվրոպատուհաններն ու դռները տեղադրել է Տարոն Տոնոյանի հարազատ եղբայր Սասուն Տոնոյանը, որին ընկերությունը փաստացի վճարել է կրկնակի կամ եռակի անգամ ավելի գումար, նկատի ունենալով պատուհանների ու դռների որակը, ինչպես նաև տվյալ ժամանակահատվածում գործող գները: Եվրոպատուհանների և դռների վերաբերյալ փաստաթղթը ուսումնասիրելուց հետո պարզվել է, որ դրանք բաղկացած են ձեռագիր հաշվարկներից և Սասուն Տոնոյանին կանխիկ գումարներ վճարելու վերաբերյալ ընկերության դրամարկղի ելքի

օրդերներից: Ընկերության գլխավոր հաշվապահ Վարդուհի Սոֆյանի կողմից իրեն տրամադրված ընկերության ծախսերի հաշվետվությունների ուսումնասիրմամբ պարզվել է, որ ընկերության կողմից 2012թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում Սասուն Տոնոյանին որպես ավանս տրամադրվել է 8.465.000 /ութ միլիոն չորս հարյուր վաթսունհինգ հազար/ ՀՀ դրամ գումար, 2013թ. նոյեմբեր ամսին՝ 400.000 /չորս հարյուր հազար/ և 2014թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում՝ 7.582.000 /յոթ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումար, ընդհանուր առմամբ 16 447 000 /տասնվեց միլիոն չորս հարյուր քառասունյոթ հազար/ ՀՀ դրամ գումար: Իրեն հայտնի չէ, թե այդ գումարներն ինչ նպատակով են տրամադրվել ու ծախսվել Սասուն Տոնոյանի կողմից, դրա վերաբերյալ հիմնավոր փաստաթղթեր չեն տրամադրվել, ուստի ինքը կարծում է, որ այդ գումարները նույնպես հափշտակվել են Տարոն և Սասուն Տոնոյանների կողմից: 2013թ. հաշվետվությունների համակարգչային օրինակի ուսումնասիրմամբ պարզվել է, որ 2013թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում Սասուն Տոնոյանին որպես ավանս տրամադրվել է ևս 11.129.000 /տասնմեկ միլիոն հարյուր քսանիննը/ ՀՀ դրամ գումար՝ նրից առանց հիկմնավորող փաստաթղթերի:

Ընկերության բազմաթիվ բուժաշխատակիցներից տեղեկացել է, որ տարիներ շարունակ Տարոն Տոնոյանն ու Վարդուհի Սոֆյանը նրանց անվամբ ձևակերպել են արձակուրդներ, սակայն նրանց արձակուրդայինների գումարները չեն վճարել ու հափշտակել են, որոշակի աշխատակիցների ստորագրել են տվել, թե իբր նրանք ստացել են ձևակերպված աշխատավարձն ամբողջությամբ, սակայն վճարել են ոչ լրիվությամբ ու տարբերությունը կազմող գումարները հափշտակել են: Տարոն Տոնոյանի կողմից <<Երևան>> բժշկական կենտրոն ընդունված բժիշկների կողմից, ընկերության գործունեությունը փաստացի դադարեցված լինելու պայմաններում, ապօրինաբար ք.Երևան, Բագրատունյաց պողոտա, 1 հասցեում գործող <<Երևան>> բժշկական կենտրոնի մասնաշենքում գաղտնի հիվանդներ են ընդունվում, սպասարկվում և նրանցից անօրինական գումարներ գանձվում, որպիսի պայմաններում վտանգում են ինչպես սպասարկվող քաղաքացիների կյանքն ու առողջությունը, այնպես էլ գույքային վնաս են պատճառում ընկերությանը, իրեն և պետությանը:

Առգրավել են <<Երևան>> բժշկական կենտրոնում առկա բոլոր հաշվապահական փաստաթղթերը և դրամարկղի գրքերը:

Զննվել է բժշկական կենտրոնի գանձարանը և պարզվել է, որ դրանում գումար առկա չէ:

Պարզվել է, որ Մարգարիտ Լևոնի Ալավերդյանը աշխատելով <<Լեբեն>> ՍՊ ընկերության <<Երևան>> բժշակական կենտրոնում որպես հաշվապահ գանձապահ, լինելով նյութական պատասխանատու անձ, ընկության կողմից ունենալով բժշկական կենտրոնի դրամարկղ նյութական միջոցների մուտքագրելու և ելքագրելու բացառիկ լիազորություն, չպարզված ժամանակահատվածում դրամարկղից հափշտակել է 2016 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ այնտեղ

առկա, 366.306.173 ՀՀ դրամը, այդ կերպ՝ յուրացնելով ընկերության կողմից իրեն վստահված առանձնապես խոշոր չափի գումարը:

19.07.2017թ. Մարգարիտ Ալավերդյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-դ մասի 1-ին կետով, որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Խուզարկություն է կատարվել Սասուն Տոնոյանի հաշվառման և բնակվության վայրում՝ Կոտայքի մարզի Պռոշյան համայնքի Գ.Չավուշի փողոցի 11 տանը և վերցվել է Արա Սամվելի Ղազարյանի անվամբ հարկ վճարողի հաշվառման վկայականը, ով համաձայն Տարոն Տոնոյանի հայտարարության հանդիսացել է իր հարևանը, ինքը վերջինիս անվամբ հաշվառված Ա/Ձ-ով կատարել է գործարքներ <<Լեբեն>> ՍՊ ընկերության հետ: Տան առաջին հարկում հայտնաբերվել է <<Եվրո>> պատուհանների արտադրամաս, որում առկա են եղել <<Եվրո>> պատուհանների մասեր և այլ շինարարական պարագաներ:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ սույն քրեական գործով մի շարք հարցեր պարզաբանելու համար անհրաժեշտ են հաշվապահության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով, 243-244 րդ և 248-րդ հոդվածների պահանջներով,

ՈՐՈՇԵՑԻ

Սույն քրեական գործով նշանակել դատահաշվապահական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել <<Հույս և Օրենք>> ՍՊ ընկերությանը: Փորձագետներին պարզաբանել ՀՀ քր.դատ.օր-ի 85 հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քր. օր-ի 338 հոդ. սահմանված քրեական պատասխանատվության մասին և առաջադրել ներքոհիշյալ հարցերը՝

1. Երևան բժշկական կենտրոնում 2006 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում ընկերության աշխատակիցների անվամբ որքա՞ն աշխատավարձ է հաշվարկվել և ըստ պատկանելության վճարվել:

2. Երևան բժշկական կենտրոնում 2006 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում ընկերության աշխատակիցների անվամբ հաշվարկված և ըստ պատկանելիության վճարված աշխատավարձի չափը զուտ հաշվապահական հաշվառման տեսանկյունից բխու՞մ է արդյոք թիվ 11167617 քրեական գործով կատարված նախաքննության տվյալներից, ինչպես նաև ընկերությունում պահպանվող անալիտիկ և սինթետիկ հաշվառման փաստաթղթերում արտացոլված տվյալներից, նախաքննության ընթացքում նշանակված դատահամակարգչային փորձաքննությամբ վերծանված տվյալներից և ընկերության հարկային գործում գտնվող հարկերի և պարտադիր վճարների

հարկման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում արտացոլված տվյալներից թե՞ ոչ, եթե ոչ ապա տարբերությունը որքա՞ն է կազմում, և այդ տարբերությունը զուտ հաշվապահական հաշվառման տեսանկյունից ի՞նչ եղանակով է տնօրինվել:

3. Երևան բժշկական կենտրոնում 2006 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում ընկերության աշխատակիցների անվամբ հաշվարկված և ըստ պատկանելիության վճարված արձակուրդային գումարների չափը զուտ հաշվապահական հաշվառման տեսանկյունից բխու՞մ է արդյոք թիվ 1116/61/ քրեական գործով կատարված նախաքննության տվյալներից, ինչպես նաև ընկերությունում պահպանվող անալիտիկ և սինթետիկ հաշվառման փաստաթղթերում արտացոլված տվյալներից, նախաքննության ընթացքում նշանակված դատահամակարգչային փորձաքննությամբ վերծանված տվյալներից և ընկերության հարկային գործում գտնվող հարկերի և պարտադիր վճարների հարկման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում արտացոլված տվյալներից թե՞ ոչ, եթե ոչ ապա տարբերությունը որքա՞ն է կազմում, և այդ տարբերությունը զուտ հաշվապահական հաշվառման տեսանկյունից ի՞նչ եղանակով է տնօրինվել:

4. Երևան բժշկական կենտրոնի կողմից 2006 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում Սասուն Տոնոյան Ա/Ձ-ի և Արա Ղազարյան Ա/Ձ-ի հետ ինչպիսի՞ գործարքներ են իրականացվել, իրականացված գործարքները արդյո՞ք երկու ընկերություններում սահմանված կարգով փաստաթղթավորվել և ստացել են արդյո՞ք համապատասխան ձևակերպումներ թե՞ ոչ, եթե ոչ ապա կոնկրետ ինչպիսի՞ խախտումներ են թույլ տրվել և ում կողմից:

5. Երևան բժշկական կենտրոնին 2006 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում, լաբորատոր հետազոտությունների համար պետբյուջեից ըստ տարևիների որքա՞ն գումար է հատկացվել և այդ հատկացված գումարները զուտ հաշվապահական հաշվառման տեսանկյունից կոնկրետ ի՞նչ տեսակի լաբորատոր հետազոտությունների իրականացման համար են ծախսագրվել և ի՞նչ եղանակով: Բաց այդ անհրաժեշտ է պարզել թե <<Երևան>> բժշկական կենտրոնը իր ունեցած բժշկական սարքավորումներով և նյութերով կարո՞ղ էր կատարել տվյալ լաբորատոր հետազոտությունները, թե՞ ոչ, եթե այո ապա նշված լաբորատոր հետազոտությունների համար ծախսագրված նյութերը համապատասխանու՞մ են տվյալ տեսակի լաբորատոր հետազոտությունների կատարման չափաքանակին թե՞ ոչ:

6. 01.01.2006թ. դրությամբ որքա՞ն է կազմել <<Երևան>> ԲԿ-ի դրամարկղի կանխիկ գումարի մնացորդը: 2006 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում դրամարկղ որքա՞ն դրամական գումարներ են մուտքագրվել և ի՞նչ աղբյուրներից: Հիշյալ մուտքագրումները

սահմանված կարգով փաստաթղթավորվե՞լ և ստացե՞լ են համապատասխան հաշվապահական ձևակերպումներ թե՞ ոչ, եթե ոչ ապա զուտ հաշվապահական հաշվառման տեսանկյունից ինչպիսի՞ խախտումներ են թույլ տրվել, ու՞մ կողմից, այդ խախտումների հետևանքով բժշկական կենտրոնին նյութական վնաս պատճառվե՞լ է թե՞ ոչ, եթե այո ապա որքա՞ն է այն կազմում:

7) ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից <<Երևան>> ԲԿ-ում /Լեբեն ՍՊ-ում/ թիվ 5013374 համաձայնագրի համաձայն կատարված բյուջեի հետ փոխհարաբերությունների ստուգման արդյունքում արձանագրված խախտումները զուտ հաշվապահական ու հարկային հաշվառման, ինչպես նաև տնտեսագիտական տեսանկյունից արդյո՞ք փոխշախկապված են սույն ստուգմամբ ի հայտ բերված խախտումների հետ թե՞ ոչ, եթե այո ապա ինչո՞վ է այն արտահայտվում և ի՞նչ հետևանքներ է ունեցել:

8. Փորձագետին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշմամբ առաջադրված չեն, սակայն կառաջանան փորձաքննության կատարման ընթացքում և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

Քննիչ,
արդարադատության ավագ լեյտենանտ՝ Ս.Հ.Բեսալյան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում քննվող թիվ 11167617 քրեական գործով 02.08.2017թ. նշանակված դատահաշվապահական փորձաքննությունը իրականացնող փորձագետներին:

Ի լրումն ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում քննվող թիվ 11167617 քրեական գործով 02.08.2017թ. նշանակված դատաբժշկական փորձաքննությունը խնդրում եմ պատասխանել նաև ներքոհիշյալ հարցերին՝

8 1. <<Երևան>> ԲԿ-ում փաստացի առկա ջեռուցման համակարգը <<Լեբեն>> ՍՊ ընկերության հաշվապահական հաշվառման փաստաթղթերով ձևակերպում ստացե՞լ է թե՞ ոչ, եթե այո ապա ե՞րբ:

9 2. Ո՞րքան գումարով է ձևակերպվել ջեռուցման համակարգը, ո՞րքան գումար է դուրս գրվել ջեռուցման համակարգի դիմաց, ո՞վ կամ ո՞վքեր են ստացել դուրս գրված գումարը:

10 3. Հայկ Բալայանի բերած 400.000 Եվրո արժողությամբ վերակենդանացման և վիրահատական բաժանմունքի գույքերը <<Լեբեն>> ՍՊ ընկերության հաշվապահական հաշվառման փաստաթղթերով ձևակերպում ստացե՞լ է թե՞ ոչ, եթե այո ապա ե՞րբ:

11 4. Ո՞րքան գումարով են ձևակերպվել վերակենդանացման և վիրահատական բաժանմունքի գույքերը, ո՞րքան գումար է դուրս գրվել վերակենդանացման և վիրահատական բաժանմունքների գույքերի դիմաց, ո՞վ կամ ո՞վքեր են ստացել դուրս գրված գումարը:

12 5. 2006-2016թթ. ընթացքում <<Լեբեն>> ՍՊԸ-ում շահույթի բաշխում կատարվե՞լ է թե՞ ոչ, եթե այո ապա ո՞ր տարիների շահույթն է բաշխվել:

13 6. Ո՞րքան է կազմել ընկերության մասնակիցներից յուրաքանչյուրի շահաբաժինը և ե՞րբ է այն վճարվել:

14 7. Հայկ Բալայանին ընկերության դրամարկղից տրված 119.384.900 ՀՀ դրամ գումարը հաշվապահական հաշվառման փաստաթղթերով ձևակերպվե՞լ է, թե՞ ոչ, եթե ձևակերպվել է, ապա այդ գումարն ընկերության դրամարկղից ի՞նչ նպատակով է ելքագրվել և ու՞մ անվամբ:

15 8. Եթե Հայկ Բալայանին ընկերության դրամարկղից տրված 119.384.900 ՀՀ դրամ գումարը հաշվապահական հաշվառման փաստաթղթերով չի ձևակերպվել, ապա նշված գումարը մտնու՞մ է արդյոք դրամարկղի պակասորդի մեջ թե ոչ:

Միաժամանակ հայտնվում է, որ 02.08.2017թ. նշանակված փորձաքննության շրջանակներում փորձագետին ուղված 4-րդ հարցում <<երկու ընկերություններ>> եզրույթը վերաբերում է <<Լեբեն>> ՍՊԸ-ին և նրա հետ ենթադրաբար գործարքներ կատարած <<Արա Ղազարյան>> և <<Սասուն Տոնոյան>> Ա/Ձ-ներին:

Քննիչ՝ **Ս.Բեսալյան**

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում քննվող թիվ 11167617 քրեական գործով 02.08.2017թ. նշանակված դատահաշվապահական փորձաքննությունը իրականացնող փորձագետներին:

Ի լրումն ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում քննվող թիվ 11167617 քրեական գործով 02.08.2017թ. նշանակված դատաբժշկական փորձաքննությունը խնդրում եմ պատասխանել նաև ներքոհիշյալ հարցերին՝

1. Ըստ քրեական գործի նյութերում առկա փաստաթղթերի և տվյալների <<Լեբեն>> ՍՊ ընկերությունում որպես ակնաբույժ աշխատած Վարազդատ Սեյրանյանի և <<Սոմատիկ>> բաժանմունքի վարիչ Լևոն Շահինյանի <<Երևան>> բժշկական կենտրոնում ծավալած գործունեության ընթացքում որքան վնաս է պատճառվել ընկերության, պետության և ընկերության մասնակից Հայկ Բալայանի շահերին և ինչ կերպ է այն դրսևորվել:

2. <<Լեբեն>> ՍՊ ընկերության գործունեության ընթացքում ըստ հաշվապահական փաստաթղթերի որ ընկերություններից, ինչ քանակի և տեսակի, ինչ արժողության թմրամիջոցներ և հոգեմետ /հոգեներգործող/ դեղեր են ձեռք բերվել, ինչ հիմքով, ինչպես, ինչ նպատակով են դրանք օգտագործվել, օտարվել կամ ոչնչացվել:

3. Եթե ձեռք բերված թմրամիջոցներ և հոգեմետ /հոգեներգործող/ դեղերը օգտագործվել են ոչ նպատակային, դրա արդյուքնում որքան վնաս է պատճառվել ընկերության, պետության և ընկերության մասնակից Հայկ Բալայանի շահերին և ինչ կերպ է այն դրսևորվել:

Քննիչ՝ **Ս.Բեսալյան**